

բային արկածախնդրութեանց եւ Արտաւազդի չարաչուք վախճանին :

ԱՐՏԱՒԱՋԻ Բ.Ի ՕՐՈՎ
(56-35, ՔՄ.Է ԱՌԱՋ)

Տիգրանին թաղի ցանկացող բոլոր որդիները անհետացեր էին անոր կենդանութեանը ատեն, եւ դահր մնացեր էր անոր Արտաւազդ զաւկին : Ոչինչ խնայուած էր պատանի Արտաւազդի դաստիարակութեանը համար : Յոյն զինանականներ եւ արուեստագէտներ եղեր էին իր դաստիարակը : Անոնց շունչին տակ ան դարձեր էր զբաղանութեան եւ արուեստներու սիրահար : Ինք իսկ, յունարէն, կը հեղինակէր ողբերգութիւններ, ճառեր ու պատմութիւն : Ան բնաւ պատերազմի մարդ չէր, ճշգրիտ հակապատկերը իր ուղմասէր ու նուաճող հօրը :

Հայաստան տկարացաւ անոր օրովը եւ ինկաւ երկու կրակի մէջտեղը, — սկսաւ խաղալիք դառնալ հոռմէական եւ պարթեական մրցակցութեանց միջեւ : Այդ այն օրերուն էր, երբ Հոռմի մէջ երեք հոգի՝ Պոմպէոս, Յուլիոս Կեսար եւ Կրասոս, եռապետութիւն կազմած, իրենց մէջն ալ բաժնեցին հոռմէական ամբողջ պետութեան կառավարութիւնը :

Կրասոս, որուն բաժին ինկած էր Արեւելքը, պատերազմ հռչակեց պարթեաներուն դէմ : Դժուարին էր Հայոց թագաւորին դիրքը : Մէկ կողմէ իրը Հոռմի դաշնակից պարտաւոր էր օգնութիւն արամադրել Կրասոսին, որ արդէն իր բանակը կեդրոնացուցած էր Սիւրիա, իսկ միւս կողմէ՝ կը գտնուէր պարթեաներու ըստպանալիքին տակ : Ստիպուեցաւ օգնել հոռմայեցի եռապետին, բայց Որոզէս, Պարթեաներու թագաւորը, իր զօրքը Սուրէնի առաջնորդութեամբ Կրասոսի դէմ զրկած ատեն, ինք ալ մնացած փոքրիկ մասով արշաւեց Հայաստան : Արտաւազդ ստիպուեցաւ զաղբեցնել իր օգնութիւնը Կրասոսին եւ ենթարկուել Պարթեաներուն :

Որոզէս չզիմեց սակայն ծայրայեղութիւններու, եւ բաւականացաւ չէզոքացնել հայոց թագաւորը ու սիրաշահիլ զանիկա : Աւելին ան ուզեց խնամիական կապ հաստատել Արտաւազդի հետ, իր Բակուր զաւկին կնու-

թեան առնելով Արտաւազդի քոյրը : Եւ մինչդեռ Կրասոսի բանակը Ռատանի մօտ կռուի բռնուած էր պարթեա զօրքին հետ, հայոց արքունիքին մէջ աեղի կ'ունենային հարսանեկան հանգէս ու խնջոյք : Կրասոս ինկաւ պատերազմին մէջ եւ Սուրէն կարելով անոր զլուխը ընծայ զրկեց իր վեհապետին, ճիշդ այն պահուն, երբ դեռ կը շարունակուէին հարսանեկան խնջոյքները, ու ներկայացում կը տրուէր հայոց պալատին մէջ :

Հայաստանի թատրոնի պատմութեան հետ իր բացատրիկ առնչութեանը համար Պլուտարքոսէն կ'արտագրենք այդ հետաքրքրական զրուագը. —

«Այն ատենները (53, Ք. Ա.) հաշտութիւն տեղի կ'ունենար Որոնդէսի եւ Արտաւազդի միջեւ, եւ Որոնդէս իր Բակուր զաւկին կնութեան կ'առնէր հայոց թագաւորին քոյրը : Այդ առթիւ իրարու խնջոյք եւ գինարբուք կը սարքէին անոնք, եւ նաեւ տեղի կ'ունենար հելլենական ականջներու հեշտալուր թուող խրախճանք, որովհետեւ Որոնդէս ծանօթ էր հելլէն լեզուին ու զպրութեանց, իսկ Արտաւազդ ինքն իսկ զբաժ է ողբերգութիւններ, ճառեր, եւ Պատմական երկեր, որոնց մէկ մասը դեռ մինչեւ այսօր կայ :

Դեռ ցրուած ջէր խնջոյքը, երբ Կրասոսի զլուխը բերին : Այդ պահուն ողբերգակ դերասանը, Յասուլին, Տրագիկացի, կ'երգէր Ազավեայ արկածները Եւրիպիդէսի «Բակլթոսեան» ողբերգութեան մէջ : Մինչդեռ անոր կ'ունկընդբէին վերացած, Սիլլակէս բաղմականին վրայ ելլելով ու երկրպագելով, մէջտեղ նետեց Կրասոսի զլուխը : Պարթեաները ցնծագին կայտեցին ու ծափեցին, իսկ պաշտօնատարները, արքային հրամանով, սեղան բաղմեցուցին Սիլլակէսը : Այն ատեն Յասուլին պարաւորներէն մէկուն տալով Պանթէոսի զիմակը զօր կը կրէր, եւ ինք, սաստիկ յուզուած, առնելով Կրասոսի զլուխը, մոլեղնարար երգեց հետեւեալ տաղը .

«Լեռնէն կը բերեմ
Նոր սպաննուած եղջերուն
«Երջանի՛կ որս :
«Ամէնուն հրճուանք տուին այս խօսքերը :